[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
11	Սեպտեմբեր	2018 թ.		Ա	1793481228
[4] Մատակարարման ամսաթիվ					
11	Սեպտեմբեր	2018 թ.		Ճշգրտվող հաշվի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ	N 11500166513800								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834								
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (քանակը)	Միավորի գինը	Չեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	90876417 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոն ստորագրություն (անուն, ազգանուն)

պաշտոն ստորագրություն (անուն, ազգանուն)

11/09/2018 13:19:31

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կրկնակի դատահոգեբանական ամբուլատոր փորձաքննություն նշանակելու մասին

<<21>> հունիսի 2018թ. ք. Մարտակերտ

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա. Ա. Ոսկանյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 90876417 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երրորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով 11.12.2017թ. հարուցվել է թիվ 90876417 քրեական գործը այն բանի համար, որ ՊԲ 38862 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 2-րդ վաշտի 1-ին դասակի 3-րդ ջոկի նոնակաձիգ, ժամկետային զինծառայող, շարքային Կարեն Արթուրի Խաչատրյանը 2017 թվականի դեկտեմբերի 11-ին ժամը 19:30-ի սահմաններում նույն զորամասի պահպանության տակ գտնվող թիվ 119 մարտական դիրքի դիտակետում դիտորդի պարտականություններն իրականացնելու ժամանակ ապօրինաբար մեկ որսիչի դիտավորությամբ կյանքից զրկելու՝ սպանելու նպատակով, իրեն ամրակցված ԱԿՄ տեսակի ԳՄ 1789 համարի ինքնաձիգից կրակոցներ է արձակել տվյալ պահին դիտորդի պարտականությունները կատարող՝ նույն զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 2-րդ վաշտի 1-ին դասակի 3-րդ ջոկի գնդացրորդ, ժամկետային զինծառայող, շարքային Նարեկ Մարզպետունու Ադիբեկյանի ուղղությամբ, որի հետևանքով վերջինս մարմնի տարբեր շրջաններում ստացել է հրազենային գնդակային մաhացու վիրավորումներ:

Կարեն Արթուրի Խաչատրյանը 2017թ. հունվարի 30-ին Տավուշի զինկոմիսարիատից ՀՀ ՊՆ 08.04.2013թ. թիվ 410 հրամանի <<26դ>> հոդվածով (առանց հեմոդինամիկայի արյան շրջանառության խանգարումներ) նախատեսված սահմանափակումով ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության՝ նշանակվելով ՊԲ 38862 զորամասում:

Նախաքննությամբ պարզվել է, որ 2017 թվականի հոկտեմբերի 13-ին շարքային Կարեն Արթուրի Խաչատրյանը շարքային Նարեկ Մարզպետունու Ադիբեկյանի հետ միասին ընդգրկվել է մարտական հերթապահության ՊԲ 38862 զորամասի պահպանության տեղամասի թիվ 115 մարտական դիրքում: Շարքային Կ.Խաչատրյանը նշանակվել է շարքային Արմեն Թադևոսի Հովակիմյանի հետ միևնույն հերթափոխում: Հերթապահության ընթացքում գիշերային ժամերին Ա.Հովակիմյանը նկատել է, որ շարքային Կարեն Խաչատրյանը դիտորդ

փորձարարական հետազոտության արդյունքների հետ, եզրակացնում են, որ Կարեն Խաչատրյանի հոգեվիճակը չի ընթացել ֆիզիոլոգիական կամ կոմուլյատիվ աֆեկտին բնորոշ դինամիկայով, նրա հոգեվիճակին բնորոշ չեն եղել ֆիզիոլոգիական կամ կոմուլյատիվ աֆեկտին բնորոշ եռափուլ ընթացքը և հետաֆեկտին բնորոշ բնութագրականները: Դեպքի պահին Կ.Խաչատրյանը գտնվել է հոգեկան խիստ լարված վիճակում, որն առաջացել է Նարեկ Ադիբեկյանի կողմից իր նկատմամբ կատարված գործողությունների արդյունքում և ուժգնացել է, երբ դեպքի օրը Ն.Ադիբեկյանը Կարեն Խաչատրյանի ծնողների հասցեին սեռական բնույթի հայհոյանք է հնչեցրել, որից հետո Կարեն Խաչատրյանը կրակոցներ է արձակել Նարեկ Ադիբեկյանի ուղղությամբ: Հարկ է նշել, որ կրակոցներ արձակելուց հետո Կարեն Խաչատրյանի հոգեկան լարվածությունը շարունակվել է, նա կատարել է նաև գիտակցված գործողություններ (վազել է գետնատնակի ուղղությամբ, դիրքի անձնակազմին հայտնել է կատարվածի և իր կողմից կատարված արարքի դրդապատճառների վերաբերյալ), ինչը ևս բնորոշ չէ հետաֆեկտային փուլի առանձնահատկություններին: Իրեն մեղսագրվող արարքը կատարելիս Կարեն Խաչատրյանը ֆիզիոլոգիական կամ կոմուլյատիվ աֆեկտի վիճակում չի գտնվել, գտնվել է խիստ լարված հոգեվիճակում, որն էապես ազդել է նրա վարքի և հեգոկան գործունեության վրա՝ նվազեցնելով իր գործողությունների հետևանքները լիարժեք գնահատելու ունակությունից:

Դատահոգեբան-փորձագետները նույն եզրահանգումը կատարել են նաև <<Հետևություններ>> բաժնում:

Այս առումով նկատելի է, որ փորձագետները կոնկրետ վերլուծության չեն ենթարկել Կ.Խաչատրյանի հոգեվիճակի և վարքի առանձնահատկությունները՝ ըստ փուլերի, բավարարվել են միայն վերացական դատողությունների շարադրանքով, և որ կարևոր է՝ մանրամասն վերլուծության և գնահատման չեն ենթարկվել ֆիզիոլոգիական կամ կոմուլյատիվ աֆեկտին բնորոշ հոգեվիճակի դինամիկան, ֆիզիոլոգիական կամ կոմուլյատիվ աֆեկտին բնորոշ եռափուլ ընթացքի յուրաքանչյուր փուլի բնութագրականները, դրսևորումները, ինչպես նաև համադրված վերլուծություն չի եղել նաև սույն քրեական գործով պարզված հանգամանքների հետ:

Ելնելով Նարեկ Ադիբեկյանի կողմից Կարեն Խաչատրյանի նկատմամբ պարբերաբար և բավականին երկար ժամանակ դրսևորած հակահիրավական և հակարարոյական վարքագծից, որը մանրամասն շարադրված է նաև վիճարկվող եզրակացության մեջ, նշված եզրակացության վերաբերյալ արտահայտված դիրքորոշումներն ու դիտարկումները ըստ էության կասկած են հարուցում դրա հիմնավորվածության վերաբերյալ:

Նկատի ունենալով, որ ստացիոնար դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննության թիվ 22 եզրակացության հոգեբանական մասի հիմնավորվածությունը կասկած է հարուցում, և մեղադրյալ Կ.Խաչատրյանի հոգեբանական

վիճակը որոշելու, քրեական գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբանության բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի ղեկավարվելով քր.դատ.օր-ի 243-244, 246-րդ, 249-րդ հոդվածներով, 251-րդ հոդվածի 2-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով նշանակել կրկնակի դատահոգեբանական ամբուլատոր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել սույն քրեական գործով փորձագետներ ճանաչված Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հոգեբաններ՝ Խաչատուր Վլադիմիրի Գասպարյանին, Գայանե Հակոբի Ղազարյանին և Անահիտ Հրանտի Տեր-Ստեփանյանին:

2. Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

- 11.12.2017թ-ին նկարագրված հանցավոր արարքը կատարելու պահին Կարեն Արթուրի Խաչատրյանը գտնվել է արդյոք ֆիզոլոգիական կամ կոմուլյատիվ աֆեկտի վիճակում, թե ոչ, եթե այո, ապա մանրամասն վերլուծության և գնահատման ենթարկել ֆիզիոլագիական կամ կոմուլյատիվ աֆեկտին բնորոշ հոգեվիճակի դինամիկան, ֆիզիոլոգիական կամ կոմուլյատիվ աֆեկտին բնորոշ եռափուլ ընթացքի յուրաքանչյուր փուլի բնութագրականները, դրանց համադրված վերլուծությունը սույն քրեական գործով պարզված հանգամանքների հետ:
- Գոյություն ունի արդյոք պատճառահետևանքային կապ շարքային Նարեկ Մարգպետունու Ադիբեկյանի կողմից Կարեն Խաչատրյանի նկատմամբ վերը նկարագրված արարքների և Կարեն Արթուրի Խաչատրյանի կողմից Ն.Ադիբեկյանի ուղղությամբ կրակոցներ արձակելու և սպանելու միջև:
- Իրեն մեղսագրվող արարքը կատարելիս Կարեն Արթուրի Խաչատրյանը գտնվել է արդյոք այնպիսի հուզական վիճակում (հոգեկան լարվածություն, ֆրուստրացիա, շփոթվածություն, սթրես և այլն), որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա:
- Կարեն Խաչատրյանին բնորոշ են արդյոք այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններ, որոնք կարող էին էապես ազդել վերջինիս վարքի վրա:

3. Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ նշված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն դատահոգեբանական փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4. Փորձագետներին տրամադրել քրեական գործի նյութերը՝ 1-ին հատորը <<482>> էջից, 2-րդ հատորը <<526>> էջից, 3-րդ հատորը <<522>> էջից, 4-րդ հատորը << >> էջից, Կարեն Խաչատրյանի զորակոչի անձնական գործը՝ << >> թերթից:

5. Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված փորձագետի պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու կամ խուսափելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ՔԿ ՔՔԳՎ երրորդ կայազորային
քննչական բաժնի պետի տեղակալ,
արդարադատության 3-րդ դասի խորհրդական Ա. Ա. Ոսկանյան